ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05 Տնտեսական հեռանկարներ

07 Պետական բյուջեի եկամուտներ

09 Պետական բյուջեի ծախսեր

11 Սոցիալական պաշտպանություն

13 Պաշտպանություն

14 Կրթություն

16 Առողջապահություն

18 Հասարակական կարգ, անվտանգություն, դատական գործունեություն

20 Տնտեսական հարաբերություններ

22 Պետական պարտք

24 Արցախից բռնի տեղահանվածներին աջակցություն

26 Բյուջետային և տնտեսական տերմինների ուղեցույց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Funded by
the European Union

Open Government Partnership

ACSES
ARMENIAN CENTER FOR SOCIO-ECONOMIC STUDIES



Գեղամա լեռներ, Հայաստան
Լուսանկարը Անի Ադիգյոզալյանի

Սույն զեկույցը մշակել է ACSES վերլուծական կենտրոնը (Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն)՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ, «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակում՝ Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակության պատասխանատվությունը բացառապես ՀՀ ֆինանսների նախարարությանն ու ACSES վերլուծական կենտրոնինն է և պարտադիր չէ, որ արտացոլի ԲԿԳ կամ ԵՄ դիրքորոշումները:

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հասցե՝ Երևան, 0010, Մելիք-Ադամյան 1
Հեռախոս՝ (+374 11) 800 600
Ֆաքս՝ (+374 11) 800 132
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

ACSES վերլուծական կենտրոն
Հասցե՝ Երևան, 0001, Մոսկովյան 3/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Էլ. փոստ՝ info@acses.am

Խոսք ընթերցողին

- Սույն զեկույցի նպատակն է՝ ընդհանուր գծերով և մատչելի կերպով տեղեկացնել հանրությանը 2024 թվականի համար կառավարության ծրագրած պետական բյուջեի ծախսերի, եկամուտների և դրանց ուղղությունների վերաբերյալ:
- Զեկույցում ներկայացված են նաև վերջին տարիներին տնտեսական աճի, պետության եկամուտների, ծախսերի և պետական պարտքի հիմնական ցուցանիշները, ինչպես այլ երկրների հետ մի շարք ցուցանիշների համեմատություններ, որոնք կարող են հետաքրքրել քաղաքացիներին:
- ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքից հետևյալ հղումով:

Ազատի ջրամբար, Հայաստան
Լուսանկարը Մուշեղ Հակոբյանի

Ի՞նչ է ցույց տալիս ՀՆԱ-ն

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը օգտագործվում է տնտեսության մեծությունը և դրա փոփոխությունը (աճը կամ անկումը) չափելու համար:

Անվանական և իրական ՀՆԱ

Անվանական արտահայտությամբ ՀՆԱ-ն հաշվարկվում է ընթացիկ գներով և **օգնում է պատկերացում կազմել տվյալ տարվա ընթացքում անհատների ու կազմակերպությունների կողմից ստացված եկամուտների մեծության վերաբերյալ**:

Իրական արտահայտությամբ ՀՆԱ-ն հաշվարկվում է հաշվի առնելով գների փոփոխությունը և **օգնում է հասկանալ, թե ինչքանով է աճում կամ կրճատվում տնտեսությունը:**

Որքանո՞վ կաճի Հայաստանի տնտեսությունը 2024 թվականին

Ֆինանսների նախարարությունը կանխատեսում է, որ **2024 թվականին ՀՀ ՀՆԱ-ն կկազմի 10 տրիլիոն 516 միլիարդ դրամ:** Կառավարությունը 2024 թվականի համար թիրախավորում է **7.0% տնտեսական աճ:**

Հայաստանի ՀՆԱ-ն և տնտեսական աճը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ի՞նչ է ցույց տալիս 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն օգնում է պատկերացում կազմել երկրում մեկ բնակչի բարեկեցության վերաբերյալ:

1 շնչի հաշվով ՀՆԱ-ն Հայաստանում և մի շարք երկրներում, ԱՄՆ դոլար



Աղբյուր՝ երկրների ազգային վիճակագրական ծառայություններ

Որքանո՞վ կաճի բնակչության բարեկեցությունը 2024 թվականին

Ըստ գնահատականների, 2024 թվականին **ՀՀ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն կկազմի մոտավորապես 3 միլիոն 512 հազար դրամ՝** 12.9%-ով ավել, քան նախորդ տարի և 73.3%-ով ավել, քան 2018-ին:

Հայաստանի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ ՎԿ

Ինչպե՞ս են ձևավորվում բյուջեի եկամուտները

Հայաստանի պետական բյուջեի եկամուտները գրեթե ամբողջությամբ ձևավորվում է հարկատուների վճարած հարկերի և տուրքերի հաշվին: Պաշտոնական դրամաշնորհները այն հատկացումներն են, որոնք օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ՀՀ-ին անժամկետ, անհատույց և անվերադարձ:

Տարբեր երկրների պետական բյուջեի եկամուտները կամ ծախսերը ՀՆԱ-ի հետ համեմատելը թույլ է տալիս պարզել, թե որ երկրներն ունեն եկամուտների կամ ծախսերի համեմատաբար բարձր կամ ցածր մակարդակ՝ հաշվի առնելով իրենց տնտեսությունների չափերը:

Պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ նկատմամբ Հայաստանում և մի շարք երկրներում, %



Աղբյուր՝ երկրների ֆինանսների նախարարություններ

Ինչքա՞ն կկազմեն պետական բյուջեի եկամուտները 2024 թվականին

2024 թվականին պետական բյուջեի եկամուտները կկազմեն **2 տրիլիոն 724 միլիարդ դրամ՝** 316 միլիարդ դրամով կամ 13.9%-ով ավել, քան սպասվում է 2023 թվականին և **շուրջ երկու անգամ ավել, քան 2018 թվականին**:

Պետական բյուջեի եկամուտները 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականին հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարի վերադարձման ծրագրից **օգտվողների թիվը կազմել է 38 հազար 911**: 2015-2023 թվականների ընթացքում ծրագրից օգտվող քաղաքացիներին պետական բյուջեից **վերադարձվել է 141 միլիարդ դրամ:**

2015 թվականին կառավարությունը գործարկել է **հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով** վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման ծրագիրը, որի շրջանակներում պետությունը առաջնային շուկայից ձեռքբերված անշարժ գույքի հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով վարկառուներին է վերադարձնում պետական բյուջե վճարած եկամտային հարկի գումարները:

Որքան գումար է վերադարձվելու հարկատուներին եկամտային հարկի գծով

2024 թվականին նախատեսվում է հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով հարկատուներին վերադարձնել **71 միլիարդ 965 միլիոն դրամ**՝ 35.8%-ով ավել, քան 2023 թվականին և շուրջ 15 անգամ ավել, քան 2018 թվականին: 2024 թվականին պետական բյուջեից վերադարձվելիք գումարները, համաձայն ծրագրի, կկազմեն պետական բյուջեի հարկային եկամուտների շուրջ 3%-ը:

Հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով պետբյուջեից վերադարձված եկամտային հարկի ծավալները 2018-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՊԵԿ

Որո՞նք են ընթացիկ և կապիտալ ծախսերը

Ընթացիկ ծախսերի մեջ են մտնում կենսաթոշակների ու նպաստների վճարումը, պետական հատվածի աշխատողների վարձատրությունը, պետական պարտքի սպասարկման տոկոսավճարների վճարումը և այլն:

Կապիտալ ծախսերի մեջ են մտնում դպրոցների, հիվանդանոցների, ճանապարհների շինարարությունը, վերակառուցումը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերումը և այլն:

Պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ նկատմամբ Հայաստանում և մի շարք երկրներում, %



Աղբյուր՝ երկրների ֆինանսների նախարարություններ

Ինչքա՞ն կկազմեն պետական բյուջեի ծախսերը 2024 թվականին

Կառավարությունը պլանավորում է 2024 թվականին ծախսել **3 տրիլիոն 206 միլիարդ**՝ շուրջ 517.5 միլիարդ դրամով կամ 19.2%-ով ավել, քան սպասվում է 2023 թվականին և **շուրջ երկու անգամ ավել, քան 2018 թվականին:**

Պետական բյուջեի ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Պետական **բյուջեից ծախսված ամեն 1000 դրամից** 248 դրամը կուղղվի սոցիալական պաշտպանությանը, 174 դրամը պաշտպանության ոլորտին, իսկ 101 դրամը պետական պարտքի սպասարկմանը:

2024 թվականի պետական բյուջեի ընդհանուր ծախսերում, ինչպես և նախորդ տարիներին, կշարունակեն **գերակայել սոցիալական պաշտպանության ծախսերը**, որոնց մեջ են մտնում կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարումը: Բնակչության սոցիալական պաշտպանությանը նախատեսվում է ուղղել ծրագրված ծախսերի **24.8%-ը կամ 794.5 միլիարդ դրամ,** որից 676 միլիարդը կհատկացվի կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարմանը: Ծախսերի երկրորդ խոշոր ուղղությունը պաշտպանության ոլորտն է, որին կուղղվի 557 միլիարդ դրամ կամ պետական բյուջեի ծախսերի 17.4%-ը: 2024 թվականին պետական բյուջեի ծախսերի 10.1%-ը կամ 323 միլիարդ դրամը կուղղվի կառավարության պարտքի տոկոսավճարների վճարմանը:

Ի՞նչ ոլորտների են ուղղվելու պետական բյուջեի ծախսերը 2024 թվականին

Սոցիալական պաշտպանություն
794.5 ՄԼՐԴ Դ

Պաշտպանություն
557.0 ՄԼՐԴ Դ

Կառավարության պարտքի սպասարկում
323.1 ՄԼՐԴ Դ

Կրթություն
287.7 ՄԼՐԴ Դ

Տնտեսական հարաբերություններ
266.0 ՄԼՐԴ Դ

Առողջապահություն
169.9 ՄԼՐԴ Դ

Հասարակական կարգ, անվտանգություն, դատական գործունեություն
223.5 ՄԼՐԴ Դ

Այլ ծախսեր
584.9 ՄԼՐԴ Դ

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեից ծախսված **ամեն 1000 դրամից 157 դրամն** կուղղվի կենսաթոշակների իսկ **54 դրամը** սոցիալական ապահովության նպաստների վճարմանը:

Սոցիալական պաշտպանությունը շարունակում է լինել ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: 2024 թվականի պետական բյուջեով նախատեսվում է սոցիալական պաշտպանությանն ուղղել ավելի քան **794 միլիարդ դրամ**, ինչը կազմում է պետական բյուջեի ծրագրված **ծախսերի 24.8%-ը**: Ծախսերի 62.2%-ը կամ 494 միլիարդ դրամ նախատեսվում է ուղղել բնակչության կենսաթոշակային ապահովությանը, 113 միլիարդ դրամ՝ սոցիալական ապահովությանը, իսկ 8.7%-ը՝ երկրում ժողովրդագրական վիճակի բարելավմանը:

Սպասվում է, որ այս ուղղությամբ ծախսերը նախորդ տարվա համեմատ **կաճեն 9.7%-ով** իսկ 2018 թվականի համեմատ՝ մոտ երկու անգամ:

Բյուջեի կառուցվածքում սոցիալական պաշտպանության մասնաբաժինը ամենամեծն է

2024 թվականի սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերի ուղղությունները



Սոցիալական պաշտպանության ծախսերը 2021-2024 թվականներին

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ի՞նչ արդյունքներ են ակնկալվում սոցիալական պաշտպանության ոլորտում

Նվազագույն ամսական աշխատավարձ
75,000 դ

Նվազագույն կենսաթոշակ
36,000 դ

488,402 անձի — **295.5** մլն դ
Աշխատանքային կենսաթոշակով ապահովում

475,881 անձի — **152.3** մլրդ դ
Կուտակային կենսաթոշակային հաշվին հատկացումներ

37,074 անձի — **41.3** մլրդ դ
Զինվորական կենսաթոշակով ապահովում

105,994 անձի — **46.3** մլրդ դ
Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու նպաստով ապահովում

66,849 ընտանիքի — **31.4** մլրդ դ
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստով ապահովում

66,372 շահառուի — **29.1** մլրդ դ
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստով ապահով

38,790 անձի — **21.8** մլրդ դ
Երեխայի ծննդյան միանվագ նպաստով ապահովում

28,816 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքի — **17.4** մլրդ դ
Դրամական աջակցության տրամադրում

40,118 անձի — **16.4** մլրդ դ
Մայրության նպաստով ապահովում

2024թվականին **պաշտպանության ոլորտին կհատկացվի շուրջ 557 միլիարդ դրամ** կամ **պետական բյուջեի ծախսերի ավելի քան 17.4%-ը:** ՀՀ կառավարությունը նախատեսվում է 2024 թվականին պաշտպանության ոլորտի ծախսերը **ավելացնել 5.6%-ով կամ 30 միլիարդ դրամով:** 2018 թվականի համեմատ 2024 թվականին պաշտպանության ոլորտի ծախսերը նախատեսվում է ավելացնել ավելի քան 2 անգամ:

2024 թվականին պաշտպանության ոլորտի ծախսերը 2018 թվականի համեմատ նախատեսվումէ ավելացնել ավելի քան 2 անգամ

2024 թվականի պաշտպանության ոլորտի ծախսերի ուղղությունները



Պաշտպանության ոլորտի ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2024 թվականին **կրթության ոլորտին կհատկացվի շուրջ 288 միլիարդ դրամ** կամ **պետական բյուջեի ծախսերի շուրջ 9.0%-ը**:

Կրթության ոլորտի ծախսերի մոտ 42.4%-ը կամ մոտ 122 միլիարդ դրամ հատկացվելու է անվճար հանրակրթական ուսուցման ապահովմանը, ավելի քան 100 միլիարդ դրամ՝ դպրոցների, մանկապարտեզների կառուցմանը և վերանորոգմանը, իսկ 23 միլիարդ դրամ՝ ուսանողների ուսման վճարների փոխհատուցմանը:

ՀՀ կառավարությունը նախատեսում է 2024 թվականին կրթության ոլորտի ծախսերը **ավելացնել 50.1%-ով կամ 96 միլիարդ դրամով**: Վերջին տարիներին կառավարությունը հետևողականորեն ավելացնում է ոլորտի ֆինանսավորումը: Օրինակ, 2024 թվականին կրթության ոլորտի ֆինանսավորմանը կուղղվի 2.4 անգամ ավել, քան 2018 թվականին:

Կառավարությունը հետևողականորեն ավելացնում է կրթության ոլորտի ֆինանսավորումը

2024 թվականի կրթության գծով ծախսերի ուղղությունները



Կրթության գծով ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Ի՞նչ արդյունքներ են ակնկալվում 2024 թվականին կրթության ոլորտում

Կառավարությունը կվերասահմանի պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին տրվող կրթաթոշակների չափերը: 2023-2024 ուսումնական տարվանից առաջին կուրսում՝ 70,000 դրամ, հաջորդ կուրսերում նախորդ ուսումնական տարվա արդյունքներից կախված մինչև 77,000 դրամ:

Մարզերի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողներին և մանկավարժներին կփոխհատուցվեն տրանսպորտային ծառայությունների ծախսերը:

408,275 սովորողի
անվճար հանրակրթական ուսուցման ապահովում
121.9 մլրդ դ

970,288 դասագրքերով և ուսումնական գրականությամբ
տարրական դասարանների աշակերտներին ապահովում
2.3 մլրդ դ

85 դպրոցների
կառուցում և նորոգում
92.8 մլրդ դ

15 մանկապարտեզների
կառուցում
7.5 մլրդ դ

45,654 ուսանողի
ուսման վճարների փոխհատուցում
22.8 մլրդ դ

291 դպրոցների
լաբորատոր գույքով և կահույքով ապահովում
8.1 մլրդ դ

Կառավարությունը նախատեսում է **առողջապահության ոլորտին 2024 թվականի պետական բյուջեից հատկացնել շուրջ 170 միլիարդ դրամ**, ինչը կազմում է պետական բյուջեի ծրագրված ծախսերի **5.3%-ը**:

Ծախսերի 47.5%-ը կամ 81 միլիարդ դրամը բաժին է ընկնում սոցիալապես անապահով և այլ առանձին խմբերի (երեխաների, զինծառայողների և այլն) բժշկական օգնությանը: Շուրջ 31 միլիարդ դրամ նախատեսվում է ուղղել բնակիչների ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության փոխհատուցմանը և 18 միլիարդ դրամ՝ երկրում առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրմանը:

Սպասվում է, որ այս ուղղությամբ ծախսերը նախորդ տարվա համեմատ կաճեն 16.8%-ով իսկ 2018 թվականի համեմատ՝ շուրջ երկու անգամ:

Ինչքան կկազմեն առողջապահության գծով ծախսերը

2024 թվականի առողջապահության գծով ծախսերի ուղղությունները



Առողջապահության գծով ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Ի՞նչ արդյունքներ են ակնկալվում **առողջապահության** ոլորտում

Կառավարությունը նախատեսում է 2024 թվականի երկրորդ կիսամյակում սկսել **Առողջության համապարփակ ապահովագրության** ներդրման գործընթացը:

Պետական բյուջեի միջոցների հաշվին առողջության ապահովագրություն ստացած անձանց թիվը **կեռապատկվի՝** 100 հազարից հասնելով 300 հազարի:

3,119,563 բնակչի — 31.0 մլրդ դ
Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության փոխհատուցում

81,810 դեպք — 22.2 մլրդ դ
Երեխաներին բուժօգնության

49 — 9.4 մլրդ դ
Կառուցվող հիվանդանոցներ և այլ առողջապահական կազմակերպություններ

290,294 դեպք — 26.2 մլրդ դ
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բուժօգնություն

47,010 դեպք — 7.5 մլրդ դ
Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների համար բուժօգնություն

57,360 դեպք — 6.9 մլրդ դ
Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բուժօգնություն

26,857 դեպք — 5.5 մլրդ դ
Անհետաձգելի բժշկական օգնություն

546,219 կանչ — 5.3 մլրդ դ
Շտապ բուժօգնություն

205,228 հիվանդների — 4.4 մլրդ դ
Անվճար դեղորայքով ապահովում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին

Կառավարությունը նախատեսում է հասարակական կարգի, անվտանգության, դատական գործունեության ապահովման համար 2024 թվականի պետական բյուջեից հատկացնել **224 միլիարդ դրամ**, ինչը կազմում է պետական բյուջեի ծրագրված **ծախսերի 7.0%-ը**: Ծախսերի 34.0%-ը կամ 76 միլիարդ դրամ նախատեսվում է ուղղել ներքին գործերի նախարարության բնագավառում պետական քաղաքականության մշակմանը և դրա կատարման համակարգմանը,ինչպես նաև պետական ծրագրերի մշակման, իրականացման, մոնիտորինգի, խորհրդատվության և աջակցության ծառայություններին: Ծախսերի 23.3%-ը կամ 52 միլիարդ դրամ կուղղվի ազգային անվտանգության ոլորտին, ներառյալ հետախուզական, հակահետախուզական, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպմանը:

Սպասվում է, որ այս ուղղությամբ ծախսերը նախորդ տարվա համեմատ կաճեն շուրջ **5.1%-ով**, իսկ 2018 թվականի համեմատ՝ ավելի քան երկու անգամ:

Կառավարությունը շարունակում է բարեփոխումները ներքին գործերի և դատական ոլորտներում

2024 թվականին հասարակական կարգին, անվտանգությանը, դատական գործունեությանն ուղղվող ծախսերը



Հասարակական կարգին, անվտանգությանը, դատական գործունեությանն ուղղվող ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ.

Ի՞նչ արդյունքներ են ակնկալվում անվտանգության և դատական գործունեության ոլորտներում

Մեկ դատապարտյալի և կալանավորված անձի վերահսկողության, կալանավայրերում նրանց պահման պայմանների ապահովման, ուսուցման և վերասոցիալականացման համար 2024 թվականին նախատեսվում է ծախսել մոտ 346 հազար դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է մոտ 8 հազ դրամով:

200
ՀՀ ՆԳՆ ոլորտի քաղաքականության վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր

183,000
Քրեական վարույթի իրականացում

3,000
Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց վերահսկողություն և պահման պայմանների ապահովում

150
ՔԿՀ-ներում մշակութային, մարզական և այլ միջոցառումներ

240
դատապարտյալների ՔԿՀ-ում կրթության ապահովում

460
կալանավորված անձի և դատապարտյալի ՔԿՀ-ում աշխատանքներում ընդգրկում

48,000
Ընդհանուր նախաձեռնված քրեական վարույթներ

12,000
Դատախազության ստորաբաժանումներ ստացված դիմումներ և բողոքներ

Կառավարությունը նախատեսում է 2024 թվականի պետական բյուջեից տնտեսական հարաբերություններին հատկացնել **266 միլիարդ դրամ**, ինչը կազմում է պետական բյուջեի ծրագրված ծախսերի **8.3%-ը:**

Ծախսերի 47.1%-ը կամ 125 միլիարդ դրամ նախատեսվում է ուղղել ճանապարհների կառուցմանը, հիմնանորոգմանը և պահպանմանը: Տնտեսական զարգացմանն ուղղվող ծախսերի երկրորդ խոշոր ուղղությունը գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունն է: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսությանը նախատեսվում է հատկացնել 45 միլիարդ դրամ, ևս 35 միլիարդ դրամ նախատեսվում է հատկացնել ջրային տնտեսության ենթակառուցվածքների բարելավմանը, ներառյալ ջրամբարների, ոռոգման համակարգերի կառուցմանը և վերանորոգմանը:

Սպասվում է, որ այս ուղղությամբ ծախսերը նախորդ տարվա համեմատ կաճեն **29.4%-ով**, իսկ 2018 թվականի համեմատ՝ ավելի քան երկու անգամ:

Ինչքան կկազմեն տնտեսական զարգացմանն ուղղվող ծախսերը

2024 թվականի տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը



Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Ի՞նչ է նախատեսվում իրականացնել տնտեսության զարգացման համար

2024 թվականին նախատեսվում է ունենալ 500 կմ վերանորոգված ճանապարհներ:

Գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի և լիզինգի տոկոսադրույքների 34 միլիարդ 42 միլիոն դրամի չափով սուբսիդավորում:

11.8 մլրդ դ

Թալին-Գյումրի 10 կմ հատվածի
վերակառուցման աշխատանքներ (Հյուսիս-Հարավ)

13.8 մլրդ դ

Քաջարան-Ագարակ 9.6 կմ հատվածի
վերակառուցման աշխատանքներ (Հյուսիս-Հարավ)

4.4 մլրդ դ

285 ձեռնարկատերերի
գյուղատնտեսական հումքի մթերման նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում

2.5 մլրդ դ

1445 հա
ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում

1.7 մլրդ դ

24610 հա
մշակաբույսերի մշակության համար տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում

299.0 մլն դ

6
խեցգետնաբուծական համալիրների հիմնում

4.1 մլրդ դ

695 շահառուի
տրամադրված ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորում

239.0 մլն դ

42.5 հա
ինտենսիվ այգու հիմնում

798.8 մլն դ

10.27 հա
ջերմատների կառուցում

Պետական բյուջեի պակասուրդը համահունչ է հարկաբյուջետային կանոններին

ՀՀ կառավարությունը ծրագրում է, որ 2024 թվականին պետական բյուջեի ծախսերը կգերազանցեն եկամուտները շուրջ **483 միլիարդ դրամով**, ինչը ՀՆԱ-ի **4.6%**-ն է: Պետական բյուջեի պակասուրդը 2024 թվականին կրում է բյուջեի ծախսային մաս ԼՂ-ի վարկավորման տեղափոխության ազդեցությունը, որը հաշվի առնելով՝ բյուջեի պակասուրդը ՀՆԱ նկատմամբ նախորդ տարվա համեմատությամբ կաճեր 0.5 տոկոսային կետի չափով 2 տոկոսային կետի փոխարեն:

Պակասուրդը ՀՆԱ նկատմամբ 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ի՞նչ է պակասուրդը

Պետական բյուջեի պակասուրդը ձևավորվում է այն դեպքում, երբ ծախսերը գերազանցում են եկամուտները:

Հայաստանի հարկաբյուջետային կանոնների համաձայն պետական բյուջեի պակասուրդը պետք է փոքր լինի բյուջեի կապիտալ ծախսերից: 2024 թվականի պետական բյուջեի պակասուրդը համահունչ է հարկաբյուջետային կանոններին. այն **(483 միլիարդ դրամ)** զգալիորեն զիջում է կապիտալ ծախսերի մեծությանը **(710 միլիարդ դրամ)**:

Մինչև 2024 թվականը ՀՀ կառավարությունը ԼՂ-ին հատկացնում էր միջպետական վարկ: Համաձայն բյուջետային գործընթացի կազմակերպման կանոնների՝ վարկի տրամադրումը ոչ թե արտացոլվում է բյուջեի ծախսային հատվածում, այլ պակասուրդում և բացասական նշանով: Այսինքն պակասուրդի մեծությունը արդյունքում նվազում է տրամադրված բյուջետային վարկերի չափով: 2024 թվականին ԼՂ-ին հատկացվող միջպետական վարկը փոխարինվել է ԼՂ-ից բռնի տեղահանվածների համար աջակցության ծրագրերով և այդպիսով տեղափոխվել բյուջեի ծախսային մաս: Սա նշանակում է, որ 2024 թվականի պետական բյուջեի պակասուրդը կրում է բյուջեի ծախսային մաս ԼՂ-ի վարկավորման տեղափոխության ազդեցությունը և նախորդ տարիների հետ պակասուրդը համեմատելիս դա պետք է հաշվի առնել: Օրինակ, ինչպես ցույց է տալիս գծապատկերը, եթե նախորդ տարիներին ԼՂ-ի վարկավորումը ներառվեր բյուջեի ծախսային մասում, ապա պակասուրդը ավելի մեծ կլիներ իսկ 2024 թվականին դրա աճը՝ ավելի փոքր:

Որո՞նք են պետական պարտքի բաղադրիչները

Արտաքին պետական պարտքի հիմնական բաղադրիչներն են արտաքին վարկերը և փոխառությունները, ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված ՀՀ պետական գանձապետական և արտարժութային պետական պարտատոմսերը:

Ներքին պետական պարտքի հիմնական բաղադրիչներն են ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժութային պետական պարտատոմսերը:

Պետական պարտքը ՀՆԱ նկատմամբ Հայաստանում և մի շարք երկրներում, %



Աղբյուր՝ երկրների ֆինանսների նախարարություններ

Պետական պարտքը շարունակելու է կառավարելի մնալ

2024 թվականի տարեվերջին պետական պարտքը կկազմի **5 տրիլիոն 314 միլիարդ դրամ** կամ 12 միլիարդ 431 միլիոն դոլար՝ 14.1%-ով ավել, քան սպասվում է 2023 թվականի համար և 58.7%-ով ավել, քան 2018-ին:

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ աճելու է 1.2 տոկոսային կետով՝ հասնելով **50.5%**-ի:

Պետական պարտքը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը 2024 թվականին

2024 թվականին կառավարության պարտքի սպասարկմանն ու մարմանն ուղղվելու է **803 միլիարդ դրամ՝** 19.4%-ով ավել, քան 2023 թվականին, և շուրջ 2.5 անգամ ավել, քան 2018 թվականին:

Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը 2021-2024 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Կառավարության պարտքի մարումը պարտքի մայր գումարի վճարմանն ուղղվող ծախսերն են, իսկ սպասարկումը՝ պարտքի տոկոսավճարները:

Կառավարության պարտքի **մարման ու սպասարկման 64%-ը բաժին է ընկնելու ներքին պարտքին** և ուղղվելու է գանձապետական պարտատոմսերի գծով վճարումներին, իսկ 36%-ը՝ արտաքին պարտքին, որի մեծ մասը կազմում են արտաքին վարկերը:

Կառավարության արտաքին պարտքի սպասարկման և մարման կառուցվածքը 2024-ին

Տեսակարար կշիռը կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների և հիմնական գումարի մարմանն ուղղվող ծախսերում

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Կառավարությունը նախատեսում է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված բնակչության համար 2024 թվականին իրականացնել **48 միլիարդ 670 միլիոն դրամ**ի չափով օժանդակության ծրագրեր:

Արցախից բռնի տեղահանված բնակչության օժանդակության ծրագրերը 2024 թվականին



- Կենսաթոշակային ապահովություն
- Ժամանակավոր կացարանի ապահովում
- Կրթություն
- Այլ ծախսեր

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ,

Կառավարությունը հոգ է տանում Արցախից բռնի տեղահանվածների մասին

20,439 անձի
աշխատանքային կենսաթոշակով ապահովում

13,849 անձի
կուտակային կենսաթոշակային հաշվին հատկացումներ

1,217 անձի
զինվորական կենսաթոշակով ապահովում

22.5 մլրդ Դ

4,360 ուսանողների
ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում

902.4 մլն Դ

1,000 ուսուցիչների
օժանդակություն

309.0 մլն Դ

100,000 շահառուի
ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարման համար օժանդակություն

15.0 մլրդ Դ

2,118 շահառուի
մայրության նպաստի հատկացում

1.6 մլրդ Դ

Բյուջետային և տնտեսական տերմինների ուղեցույց

Հարկաբյուջետային քաղաքականություն (Fiscal policy)

պետության կողմից իրականացվող հիմնական մակրոտնտեսական քաղաքականություններից մեկն է, որը հարկերի և պետական ծախսերի միջոցով ուղղված է ամբողջական առաջարկի և պահանջարկի կարգավորմանը՝ նպատակ ունենալով զբաղվածության մակարդակի փոփոխությունը, տնտեսական աճի փոփոխությունը կամ տնտեսական կայունությունը: Հարկաբյուջետային քաղաքականությունը Հայաստանում հիմնականում մշակվում է կառավարության և Ազգային ժողովի կողմից, իրականացվում է կառավարության կողմից:

Պետական բյուջե (State Budget)

կառավարության լիազորությունների և պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն կառավարության ֆինանսական միջոցների ամբողջական հաշվետվությունն է, որը ներառում է պետական ծախսերը, հարկային և ոչ հարկային եկամուտները, դեֆիցիտը կամ հավելուրդը: Որպես տնտեսական քաղաքականության և, մասնավորապես, հարկաբյուջետային քաղաքականության կարևոր փաստաթուղթ, բյուջեն ցույց է տալիս տնտեսության վրա պետության ազդեցության բնույթը և չափը: Այսինքն, բյուջեն ցույց է տալիս, թե հասարակական ռեսուրսներն օգտագործելով կառավարությունը ինչպես է ծրագրում իրականացնել քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում: Բյուջեն կազմվում և մշակվում է գործադիր իշխանության կողմից և ներկայացվում է օրենսդիր մարմին (Ազգային ժողով)՝ ճշգրտման և հաստատման համար: Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն օրենքի ուժ ունեցող փաստաթուղթ է:

Բյուջետային գործընթաց (Budget Process)

հանրային հատվածի բյուջեների ձևավորման, բյուջեների կատարման (ներառյալ հաշվետվությունների կազմում, աուդիտ և գնահատում) գործընթացն է:

Բյուջեի կատարում (Budget execution)

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կանոնակարգված գործունեությունն է՝ բյուջեների եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսերի իրականացման ուղղություններին համապատասխան: Պետական բյուջեի կատարման համար պատասխանատու է կառավարությունը:

Բյուջետային տարի (Fiscal or Budget year)

12 ամիս տևողությամբ ժամանակահատված է, որի համար նախատեսվում և հաշվառվում են բյուջեի եկամուտները և ծախսերը: Հայաստանում այն համընկնում է օրացուցային տարվա հետ:

Բյուջեի ծախսեր (Budget expenditures)

տվյալ տարվա բյուջեով նախատեսված և օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարության և/կամ համայնքների կողմից կատարման ենթակա ծախսերն են:

Բյուջեի եկամուտներ (Budget revenues)

այն դրամական միջոցներն են, որոնք որոշակի կարգով, անհատույց և անվերադարձ կերպով հավաքագրվում և վճարվում են պետական կամ համայնքի բյուջե: Բյուջեի եկամուտները բաժանվում են հարկային եկամուտների, տուրքերի, ոչ հարկային եկամուտների, կապիտալի գործառնություններից եկամուտների և տրանսֆերտների:

Բյուջետային և տնտեսական տերմինների ուղեցույց

Բյուջեի դեֆիցիտ/պակասուրդ (Budget deficit)

բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ, ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելին, քան բյուջեի եկամուտներն են: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավելով լրացուցիչ միջոցներ ֆինանսավորվում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:

Բյուջեի հավելուրդ (Budget surplus)

բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումն է: Այն տեղի էունենում, երբ ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելի քիչ, քան բյուջեի եկամուտներն են:

Դեֆիցիտի ֆինանսավորում (Deficit financing)

պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում և մարում, վարկերի ստացում և մարում, սեփականաշնորհումից ստացված միջոցների օգտագործում և այլն: Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ըստ ներքին և արտաքին աղբյուրների: Բյուջեի դեֆիցիտը կարող է ֆինանսավորվել բանկերի, ոչ բանկային ինստիտուտների և ֆիզկական անձանց կողմից:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (Gross domestic product, GDP)

որոշակի ժամանակաշրջանում երկրի տնտեսական տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների գումարային արժեքն է՝ արտահայտված շուկայական գներով:

Տնտեսական աճ (Economic growth)

բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալների և/կամ համախառն ավելացված արժեքի փոփոխությունը: Տնտեսական աճը սովորաբար չափվում է ՀՆԱ-ի իրական աճով կամ մեկ շնչին ընկնող իրական ՀԱԱ-ի փոփոխությամբ:

Պետական պարտք (Public debt)

պետության պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Այն գոյանում է դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ռեզիդենտներից կամ ոչ ռեզիդենտներից արժեթղթերի կամ վարկերի միջոցով փոխառությունների ներգրավման արդյունքում:

Ծրագրային բյուջե (Program Budgeting)

նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման արդյունքայնությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը: Այն ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն բյուջետային ծրագրերն իրականացնելիս և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրերի արդյունքների ձեռքբերման համար: Պատասխանում է հետևյալ հարցերին՝ ինչ արդյունքներ ձեռք կբերվեն, ինչ ազդեցություն կլինի շահառուների վրա:

Աղբյուր՝ Բյուջետային և տնտեսագիտական տերմինների և հասկացությունների համառոտ հանրամատչելի բացատրագիր, ՏԶՀԿ, 2003թ.

«Քաղաքացու բյուջե 2024» ծրագրի շրջանակներում պատրաստված տեսանյութերը

Հոլովակներ

- Ի՞նչ է բյուջեն — Դիտել
- Ինչպե՞ս է ձևավորվում պետական բյուջեն — Դիտել
- Ինչպե՞ս են բաշխվում պետական բյուջեի ծախսերը — Դիտել
- Ինչո՞ւ է կարևոր տեղեկացված լինել պետբյուջեի մասին — Դիտել
- Ինչպե՞ս կարող են քաղաքացիները մասնակցել բյուջեի ձևավորմանը — Դիտել
- Ո՞ւմ դիմել բյուջեի ձևավորմանը մասնակցելու համար — Դիտել
- Ինչքա՞ն կուղղվի պետբյուջեից 2024-ին անվճար հանրակրթության ապահովմանը — Դիտել
- Ինչքա՞ն կուղղվի ուսանողների ուսման վարձի փոխհատուցմանը պետբյուջեից 2024-ին — Դիտել
- Ինչքա՞ն կուղղվի առողջապահության ոլորտին 2024 թվականի պետբյուջեից — Դիտել
- Պահանջելով ՀԴՄ կտրոն մենք նպաստում ենք պետբյուջեի եկամուտների աճին — Դիտել

Վիդեոգրաֆիկաներ

- ՀՀ պետական բյուջե 2024 — Դիտել
- Պետական բյուջեի կրթության գծով ծախսերը 2024-ին — Դիտել
- Պետական բյուջեի գիտության գծով ծախսերը 2024-ին — Դիտել
- Պետբյուջեի կենսաթոշակների և սոցիալական ապահովության նպաստների գծով ծախսերը 2024-ին — Դիտել
- Պետական բյուջեի առողջապահության գծով ծախսերը 2024-ին — Դիտել
- Պետբյուջեից Արցախից բռնի տեղահանվածներին աջակցությունը 2024-ին — Դիտել
- Պետբյուջեի ճանապարհային ցանցի զարգացման ծախսերը 2024-ին — Դիտել
- Պետբյուջեից գյուղատնտեսության ոլորտում գործող տնտեսվարողներին աջակցությունը 2024-ին — Դիտել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Funded by
the European Union

Open
Government
Partnership

ACSES
ARMENIAN CENTER FOR
SOCIO-ECONOMIC STUDIES

Գյուղ Տաթև, Հայաստան
Լուսանկարը Գևորգ Ավետիսյանի

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հասցե՝ Երևան, 0010, Մելիք-Ադամյան 1
Հեռախոս՝ (+374 11) 800 600
Ֆաքս՝ (+374 11) 800 132
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

ACSES վերլուծական կենտրոն
Հասցե՝ Երևան, 0001, Մոսկովյան 3/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Էլ. փոստ՝ info@acses.am